վանդներն երկար կարդալով՝ ներդաշնակութիւն մը կը ծնանի։ Սոյդ է որ այս առաձգական օրէնքով՝ բայց պատշաճ չափու մէջ՝ կարելի է տաղաչափական արդիւնք յառաջ բերել, եւ եղած է արդեամբք, վասն զի մեր շարականաց եւն մեծամասնութիւնն սոյնպիսի ներդաշնակութեան օրէնքի վրայ հիմնեալ է՝ ըստ պատշաճ չափու. — եւ այս արդէն շատոնց ծանօթ էր։ Սակայն ըստ մեզ՝ չափէն աւելի ընդլայնուած է սոյն օրէնքը հեղինակին քով, որով նաեւ այնպիսի կտորներ իբրեւ տաղաչափութիւն գրուած են մեր առջեւ (թէեւ "անկանոն" անուամբ,) որ արդեամբք ներդաշնակաւոր արձակ գրութենէ ամենեւին չեն զանազանուիր։ Բայց աւելի եւս խնդրական ձեռնարկութիւն կը համարինք սոյնպէս մեկնել հնաւանդ "Գողթան" պատառիկները։ Հեղինակիս սոյն պատառիկներն անդամատելու կերպը գոնէ կամայական է եւ տեղ տեղ յայտնապէս սխալ։

(Մնացեալը գալ անգամ)  Հ. Յ. Տ.

## ՊՐ. Ն. ՇԱՀԼԱՄԵԱՆ

Դեռ մի ամիս չէ անցել ինչ մեր երգիչ Ն. Շահլամեանցը վերջին հրաժեշտ տալով Իտալիային, ուր նա երգեցողութիւն սովորելու եւ իր ձայնը կատարելագործելու համար երեք տարի անցրեց, ուղղուեց դէպ ի իր ապագայ գործունէութեան տեղը Պետերբուրգ, որպէս զի այնտեղ քննութիւն տալով Ռուսաց կայսերական օպերայի յանձնաժողովի առաջ՝ արժանանար իր համար նախատեսուած նոյն օպերայի առաջին եւ գլխաւոր դերեր կատարող տենոր երգչի խիստ պատուաբեր աստիճանին։ Հանել այդ նպատակին, ընդունուիլ Պետերբուրգի աշխարհահռչակ օպերայում, ուր երգել են աշխարհիս ամենայայտնի երգիչները, (— բաւական է յիշել որ Պատիի պէս երգչուհին իր ամենափայլուն ժամանակում այդ օպերայի զարդն է եղել եւ երբ երկու տարի առաջ ահագին գումարով հրաւիրուեց երգելու, երկնչեց այն տեղ գնալ եւ աւելի լաւ համարեց իր տուած խօսքը մեծ դրամական վնաս կրելով չպահել, քան այնտեղ գնալով սառը ընդունելութիւն գտնել —.) շատ արտիստների համար փառքի եւ գաղափարի (idéal) վերջնակէտին հասնիլ է համարուում։ Այդ էր պատճառը. որ մեր յարգելի երգիչը երեք շաբաթ առաջ Վիեննա եղած ժամանակ խօսելով իր քննութեան ելքի մասին անկարող էր ծածկել սրտի յուզմունքը, անորոշ անհանգիստ զգացմունքը, թէեւ նրա Իտալիայում արած արտասովոր յաջողութիւնները անպայման գրաւական էին նրա փայլուն ապագային։ Այժմ Պետերբուրգից ստացած մի մասնաւոր նամակից ուրախութեամբ տեղեկանում ենք, որ Ն. Շահլամեանը՝ մարտի 25 (հին տոմար) կայսերական թատրօնում օրկեստրով քննութիւն տալով ի ներկայութեան թատրօնական վարչութեան պետական յանձնաժողովի եւ բազմաթիւ հասարակութեան երգել է զանազան դժուարին կտորներ Aida եւ Gioconda օպերաներից եւ կատարեալ յաղթութիւն տարել։ Նրա հետ քննուել են նաեւ ուրիշ 10 հոգի, բայց միայն նա է արժանացել բուռն ծափահարութիւնների եւ շնորհաւորութիւնների, որից յետոյ իսկոյն օթեակ է հրաւիրուել եւ ընդունուել մասնաւորապէս թատրօնի դիրեկտորի եւ միւս անդամների շնորհակալութիւնը. մայրաքաղաքի բոլոր ազգի թերթերը մեծ գովասանքով ու հրճուանքով խօսացին եւ խօսում են նրա մասին։ Այդ մեծ յաղթանակի շնորհիւ նա ընդունուել է, առանց նախապէս մի օպերայում դեպիւտ տալու. եւ այս աշունքից պիտի մասնակցի կայսերական օպերայի ներկայացումներին. առաջին անգամ դուրս կը գայ Gioconda օպերայում։ Քննութեան յաջորդ օրը՝ մարտի 26ին մասնակցել է արդէն մի մեծ կոնցերտի, ուր նրան առաջին անգամ լսել են Պետերբուրգի ամենաբարձր դասակարգը՝ ի ներկայութեան թագաւորի, թագաժառանգի եւ մեծ իշխանների. ընդունելութիւնը եւ յաջողութիւնը կատարեալ է եղել։

Ն. Շահլամեանը Ապրիլի վերջին գնում է Կովկաս՝ իր հայրենիքը, ուր նա պիտի աշխատի, ինչպէս արդէն Վիեննայում եղած ժամանակ խօսք էր տուել, տեղական հայ հասարակութիւնը դրդել, որ նա նիւթապէս օգնի, որպէս զի կամ Կարա-Մուրզայի պատրաստած քորը գայ Վիեննա մասնակցելու ամառս տեղի ունենալի "Միջազգային թատերական-երգեցողական ցուցահանդէսին," եւ կամ եթէ այդ քորի այստեղ գալը չյաջողուի, ինքը անձամբ պէտք է մեր նոր երիտասարդ երգիչներից մի խումբ կազմելով այս տեղ գայ։ Յուսանք, որ նրա ջանքերը եւ Կովկասու Հայերի քաջածանօթ առատաձեռնութիւնը կը նպաստեն նրա այդ իրաւամբ ցանկալի եւ ազգօգուտ գործի գլուխ գալուն։

Տ. Մ.